Երևան Ջուր
Yerevan Djur

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԲԸԱՀԾՁԲ-10-2-1

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

(կազմակերպությունների համար)

ք. Երևան /9 -ը փետրվարի 2016թ.

«Երևան Ջուր» ՓԲԸ-ն /այսուհետև՝ ընկերություն/, (այսուհետ՝ Ջրամատակարար), ի դեմս գլխավոր տնօրեն Գ.Գրիգորյանի, ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, մի կողմից, և ՀՀ պաշտպանության նախարարությունը, (այսուհետև բաժանորդ) ի դեմս նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի մյուս կողմից, ղեկավարվելով նախարարության կանոնադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոններով /այսուհետև՝ կանոններ/ որոշեցին կնքել սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ջրամատակարարն իր ջրամատակարարման համակարգին միացված ցանցի (կամ ընդհանուր օգտագործման ծորակի) միջոցով Բաժանորդին մատակարարում է պետական ստանդարտների և սույն Պայմանագրի № 1 Հավելվածի պահանջներին համապատասխանող խմելու ջուր (այսուհետ՝ ջուր) և իր ջրահեռացման համակարգով հեռացնում ու մաքրում է կենցաղային կեղտաջուրը՝ համաձայն Հավելված № 2-ի, իսկ Բաժանորդն օգտագործում է մատակարարված ջուրը, կենցաղային և արտադրական կեղտաջրերը լցնում ջրահեռացման համակարգ և հաշվարկված ջրի ու հեռացված կեղտաջրերի դիմաց վճարները Պայմանագրով սահմանված կարգով վճարում է Ջրամատակարարին՝ Համաձայն Հավելված № 3-ի:

1.2 Բաժանորդն ընդունում է պայմանագիրը ստորագրելու օրվա դրությամբ ջրամատակարարի կողմից մատակարարված Ջրի դիմաց իր պարտքը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կողմերը պարտավորվում են ղեկավարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կանոններով և սույն Պայմանագրով:

2.2 Ջրամատակարարը պարտավորվում է՝

2.2.1 Ոչ շուրջօրյա ջրամատակարարման դեպքում ապահովել բաժանորդի ամենօրյա ժամային ջրամատակարարումը (եթե պայմանագրով սահմանված չէ ջրամատակարարման այլ ժամանակացույց).

2.2.2 Բաժանորդից իր տնօրինության ջրահեռացման համակարգ ընդունել կենցաղային և արտադրական կեղտաջրերը.

2.2.3 Պահպանել կողմերի տնօրինության ջրամատակարարման համակարգերի սահմանազատման կետում մատակարարվող ջրի որակը ըստ գործող պետական ստանդարտների պահանջների և ապահովել կենցաղային կեղտաջրերի հեռացումն ու մաքրումը.

2.2.4 Բաժանորդին անհապաղ տեղեկացնել իր համակարգում տեղի ունեցած վթարների ու խցանումների մասին և դրանք վերացնել հնարավորինս սեղմ ժամկետում, եթե ջրամատակարարման դադարեցումը պայմանավորված չէ կանոնների 36-րդ կետով, 45-րդ կետի «դ» և «զ» ենթակետերով նախատեսված դեպքերով.

2.2.5 Ջրամատակարարման, կեղտաջրերի հեռացման ու մաքրման սակագների փոփոխման դեպքում դրա մասին առնվազն մեկ ամիս առաջ տեղեկացնել զանգվածային լրատվության միջոցներով,

2.2.6 Բաժանորդի պահանջի դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել ջրի որակը հավաստող փաստաթուղթ (երաշխիք).

2.2.7 Բաժանորդի պատվերով և նրա միջոցների հաշվին կատարել նրա ներքին ցանցում ջրաչափի տեղադրման ու ներքին ցանցերի նորոգման աշխատանքներ.

2.2.8 Բաժանորդի մոտ ջրաչափի ճիշտ աշխատանքի նկատմամբ կասկած առաջանալու և համապատասխան դիմում ներկայացվելու դեպքում 10-օրյա ժամկետում կատարել ջրաչափի ստուգում.

2.2.9 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սահմանված չափաքանակներին համապատասխան, իսկ Ջրաչափի առկայության դեպքում՝ Ջրաչափի ցուցմունքին համապատասխան, հաշվարկել և բաժանորդին ներկայացնել նրա կողմից օգտագործված ջրի ու հեռացված կեղտաջրերի դիմաց վճարման ենթակա գումարի չափը:

2.2.9.1 Յուրաքանչյուր ամիս ջրամատակարարի և բաժանորդի ներկայացուցիչները համատեղ գրանցում են ջրաչափերի ցուցմունքները և կնիքների առկայությունը համապատասխան ակտով:

2.2.9.2 Բաժանորդի ներկայացուցչի կողմից ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում դրա ծախսագրումն իրականացվում է Բաժանորդի և Ջրամատակարարի համատեղ ստուգումից հետո:

2.2.9.3 Ջրաչափի խոտանման դեպքում խոտանված օրերի համար ծախսը հաշվարկվում է նախորդ երեք ամիսների միջին օրականի չափ, մինչև հաշվիչի վերանորոգումը:

2.2.9.4 Յուրաքանչյուր ամսվա մինչև 20-ը, բայց ոչ ուշ, քան 20.12.2016թ.; Ջրամատակարարը Պատասխանատու ստորաբաժանմանն է ներկայացնում մատուցված Ծառայության (Ծառայության առանձին փուլի) մասին իր կողմից ստորագրված նախորդ ամսվա հաշիվ-ապրանքագրերը և հանձնման-ընդունման արձանագրությունների երկու օրինակ (Հավելված № 4), կցելով ջրաչափերի ցուցմունքների գրանցման ակտերը և խոտանված ջրաչափերի առկայության դեպքում՝ հաշվարկները, իսկ Բաժանորդի զորամասերին՝ հաշիվ-ապրանքագրերը համապատասխան հաշվապահական ձևակերպումների համար:

2.2.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Բաժանորդին:

2.3. Բաժանորդը (Պատասխանատու ստորաբաժանումը) պարտավորվում է՝

2.3.1 Ներկայացվող փաստաթղթերի հիման վրա յուրաքանչյուր ամսվա մինչև 25-ը կատարել նախորդ ամսվա մատուցված ծառայությունների դիմաց վճարումները.

2.3.2 Չխոչընդոտել ջրամատակարարի ներկայացուցչի մուտքն իր տարածք՝ լուսանկարով ծառայողական վկայականը ներկայացնելու դեպքում՝ տեղադրված ջրաչափի ցուցմունքները գրառելու, Կանոնների համաձայն շահագործման վիճակը համատեղ ուսումնասիրելու, իսկ Ջրամատակարարի մոտ Բաժանորդի օգտագործած խմելու ջրի ծավալների նկատմամբ կասկածներ առաջանալու դեպքում՝ ստուգումներ կատարելու համար.

2.3.3 Ջրի չմատակարարման, կենցաղային կեղտաջրերի չհեռացման կամ դրանց ոչ պատշաճ կատարման, ջրաչափի անսարքության, կապարակնիքի խախտման նկատմամբ կասկածներ առաջանալու դեպքում դրանց մասին անհապաղ տեղեկացնել Ջրամատակարարին.

2.3.4 Ապահովել իր տնօրինության ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի, սարքերի ու սարքավորումների պահպանությունն ու դրանց շահագործումը.

2.3.5 Ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայություններից հրաժարվելու դեպքում դրա մասին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնել ջրամատակարարին.

2.3.6 Չգերազանցել Պայմանագրով սահմանված թույլատրելի սահմանային կոնցենտրացիան (թույլատրելի սահմանային կոնցենտրացիայի համար հետագայում կկազմվի լրացուցիչ համաձայնագիր, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը):

2.3.7 հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 (հինգ) օրվա ընթացքում բայց ոչ ուշ, քան 20.12.2016թ., Ջրամատակարարին ներկայացնել իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայության արդյունքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ՋՐԻ ՈՒ ՀԵՌԱՑՎԱԾ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Բաժանորդին մատակարարված ջրի ծավալը հաշվարկվում է Ջրամատակարարի և Բաժանորդի Ջրամատակարարման համակարգի սահմանազատման կետում տեղադրված ջրաչափի և (կամ) Բաժանորդի ներքին ցանցում տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

3.2 Ջրաչափի բացակայության կամ դրա անսարքության, կապարակնիքների խախտման (պոկման) դեպքում մատակարարված ջրի ծավալը հաշվարկվում է կանոնների 24-րդ և 25-րդ կետերով սահմանված կարգով.

3.3 Օգտագործված ջրի և ջրահեռացման համակարգ բաց թողնված կենցաղային ու արտադրական կեղտաջրերի ծավալների հաշվարկման ժամանակահատված է համարվում հաշվարկային ամիսը.

3.4 Բաժանորդի կողմից ջրահեռացման համակարգ լցվող կենցաղային կեղտաջրերի ծավալը հաշվարկվում է կանոնների 26-րդ կետի համաձայն:

3.5 Բաժանորդի կողմից Ջրամատակարարի մատուցած Ծառայության արդյունքը ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու (հաստատելու) պահից:

4. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Բաժանորդին մատակարարված ջրի և ջրահեռացման ծառայությունների դիմաց վճարները հաշվարկվում են Բաժանորդի ջրաչափի ցուցմունքների և Պայմանագրում նշված սակագների հիման վրա, իսկ վճարումը կատարվում է բանկային համակարգով կամ փոստային բաժանմունքում՝ Ջրամատակարարի բանկային հաշվին:

4.2 Պայմանագրի կնքման պահից գործում են հետևյալ սակագները՝

ա) մատակարարվող մեկ խոր. մետր ջրի համար 144.718 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը).

բ) հեռացվող մեկ խոր. մետր կեղտաջրերի համար 11.918 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը)

գ) մաքրվող մեկ խոր. մետր կեղտաջրերի համար 13.62 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը)

4.3 Պայմանագրի 4.2-րդ կետով նախատեսված սակագները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխվելու դեպքում գործում են փոփոխված սակագները:

4.4 Բաժանորդն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Ջրամատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի № 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2016թ.:

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Եթե արտադրության կամ աշխատանքային առանձնահատուկ պայմանները պահանջում են անընդմեջ ջրամատակարարում, ապա բաժանորդը պարտավոր է ունենալ պաշարապահ ռեզերվուար:

5.1.1 Բաժանորդի ծախսերը գրանցող ջրաչափերը համարվում են Ջրամատակարարի սեփականությունը, որոնք ի պահ են հանձնված Բաժանորդին: Կնիքների առկայության և արտաքին միջամտությունների բացակայության դեպքում չափիչ սարքերի շահագործումը և սպասարկումը իրականացնում է Ջրամատակարարը, իսկ հակառակ դեպքում՝ Բաժանորդը, և մատակարարված ջրի ծավալը հաշվարկվում է խողովակի թողունակությամբ:

5.1.2 Բաժանորդի զորամասերի (հավելված № 2) ցանկում փոփոխությունները և լրացումները կատարվում են Ջրամատակարարի կամ Բաժանորդի գրավոր հայտերի համաձայն:

5.2 Լրացուցիչ պայմանները սահմանում են կողմերը, և դրանք չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Կանոններին և Պայմանագրին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՏԱՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Պայմանագրային պարտավորությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ վնաս հասցնելու դեպքերում, ինչպես նաև Բաժանորդի կողմից օգտագործված ջրի ծավալի նվազեցման նպատակով ջրաչափի բնականոն աշխատանքի խախտման, ջրաչափի կողանցմամբ ջրընդունման, ջրաչափի կապարակնիքների վնասման (պոկման, կեղծման) և այլ միտումնավոր խախտումների հայտնաբերման դեպքերում կողմերը պատասխանատվություն են կրում և փոխհատուցում են պատճառված վնասները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ու Կանոններով սահամանված կարգով՝ բացառությամբ Պայամանագրի 6.2-րդ կետում նշված դեպքերի:

6.2 Օրենքով սահամանված կարգով ֆորս-մաժորային դեպքերում ջրամատակարարման դադարեցման, ինչպես նաև Բաժանորդի մեղքով իր կրած վնասի համար Ջրամատակարարը պատասխանատվություն չի կրում:

6.3 Բաժանորդի կողմից ջրամատակարարի ջրահեռացման համակարգով հեռացվող կեղտաջրերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանման լիազորված մարմնի կողմից

սահմանված նորմերը գերազանցելու դեպքում բաժանորդը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4 Բաժանորդը ջրամատակարարման և ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման համար Պայմանագրի 2.3.1-ին ենթակետում նշված ժամանակահատվածում գումարը չվճարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար ջրամատակարարին վճարում է տուժանք՝ չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով:

6.5 Ջրի չմատակարարման, կենցաղային կեղտաջրերի չհեռացման կամ ջրամատակարարման (ջրահեռացման) պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում կազմվում է խմելու ջրի թերմատակարարման մասին ակտ, բայց ոչ ավելի քան մեկ ամիս ժամկետով, եթե Բաժանորդը Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետի համաձայն հաշվետու ամսվա ընթացքում առնվազն 2 անգամ դրա մասին գրավոր տեղեկացրել է Ջրամատակարարին, ինչի հիման վրա Ջրամատակարարը Բաժանորդին վճարում է տուժանք՝ թերմատակարարված յուրաքանչյուր մեկ խոր. մետր ջրի համար՝ սակագնի քառապատիկի չափով:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով :

7.2 Բանակցությունների արդյունքում փոխհամաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

8.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ու կողմերի համար պարտադիր է դառնում դրա կնքման պահից և գործում է մեկ տարի ժամկետով:

8.2 Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է 2016թ. հունվարի 1-ից հետո կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

8.35 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Բաժանորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

8.4 Սույն Պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված՝ նույն ժամկետով և պայմաններով, եթե կողմերից որևէ մեկը մեկ ամիս առաջ չի դիմում մյուս կողմին՝ այն փոփոխելու կամ դադարեցնելու համար:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

9.1 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել առնվազն մեկ ամիս առաջ դրա մասին տեղեկացնելով մյուս կողմին, եթե՝

9.1.1 Բազմիցս խախտվել են ծառայությունների մատուցման ժամկետները (2-ից ավելի անգամ).

9.1.2 Բազմիցս խախտվել են ծառայությունների դիմաց վճարման ժամկետները (2-ից ավելի անգամ).

9.1.3 Արտակարգ իրավիճակի դեպքում (ֆորս-մաժոր), եթե այն տևում է 3 ամսից ավելի.

9.2 Պայմանագրի միակողմանի լուծման մասին զգուշացում ստանալիս մյուս կողմն իրավունք ունի այն դիտարկելու որպես վեճ, որը լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կանոններով սահմանված կարգով.

9.3 Պայմանագիրն առանց պատճառաբանության միակողմանի լուծելու ցանկություն հայտնած կողմը պարտավոր է փոխհատուցել դրա հետևանքով մյուս կողմին պատճառած վնասները:

9.4 Պայմանագրի փոփոխումը կամ վաղաժամկետ դադարումը կողմերին չի ազատում մինչ այդ Պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

10. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

10.1 Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների ծառայության դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն

Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր /Համաձայնագիր/ կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

11.2 Սույն Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

11.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրության դատական կարգով:

11.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

11.5 Սույն պայմանագիրը կազմված է 10 թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի №№ 1, 2, 3, 4, 4.1 Հավելվածները հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

11.6 Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

11.7 Սույն պայմանագով նախատեսված՝ Բաժանորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿԾ և ԶԲ վարչությունը**:

12. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐ	ԲԱԺԱՆՈՐԴ
«Երևան Ջուր» ՓԲԸ	ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ, ք. Երևան 0025,Աբովյան 66ա	ք. Երևան, Բագրևանդի 5
«Արդշինբանկ» ՓԲԸ,	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 247010006820	ՀՀ 90001117034
ՀՎՀՀ 01555351	ՀՎՀՀ 02703824
Հեռ./ֆաքս 374-10 56 93 57	ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
Գլխ. Տնօրեն	ՆՏԱ դեպարտամենտի պետ
Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ	Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

Հավելված № 1
№ ԲԸԱՀԾՁԲ-10-2-1 պայմանագրի

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման տեխնիկական բնութագիր 2016թ.

Ծառայության անվանում	տեխնիկական բնութագիր
Խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում	համաձայն N2-III-Ա-2-1-2002թ. սան. նորմերի և կանոնների

Հավելված № 2

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման գնման ժամանակացույց 2016թ.

Ծառայության անվանումը	Չ/մ	Ըստ ամիսների												Ընդամենը
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII /ուշ. քան 20.12.16թ./	
Խմելու ջրի մատակա-րարում և ջրահեռացում	խոր.մ	162,025	162,025	162,025	162,025	162,025	162,025	162,025	162,025	162,025	162,025	162,025	162,025	1,944,300

Ծանոթություն. Մեկ խորանարդ մետր ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման սակագները հաստատված են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ «Երևան ջուր» ՓԲԸ-ի համար՝ 2013թ. հունիսի 21-ի N 221-Ն որոշմամբ: Բաժանորդների ցանկը կցվում է:

Հավելված № 3

Վճարման ժամանակացույց 2016թ.*

Անվանումը	Չ/մ	CPV կոդը	Միավորի սակագինը ըստ մատուցվող ծառայության /ՀՀ դրամ/		Նախատեսվում է ֆինանսավորել ըստ ամիսների												Ընդամենը
					I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII /ուշ. քան 25.12.16թ./	
Խմելու ջրի մատակա-րարում և ջրահեռացում	դրամ	65111100 /1/1/1	ջրամատ.	144.718	0	24,000,000	36,000,000	61,000,000	86,000,000	111,000,000	136,000,000	161,000,000	186,000,000	221,000,000	256,000,000	292,142,700	292,142,700
			ջրհեռ.	11.918													
			կեղտաջ. մաքրում	13.62													

* Վճարման ժամանակացույցը կազմված է ամենամյա կարգով:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐ
«Երևան ջուր» ՓԲԸ

Գլխ. Տնօրեն Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՑԱՆԿ

Հ/Հ	Զորամասի համարը	Տեղակայման վայրը	Քարտի համարը
1	20440	Երևան	5-9-3
2	10724	Երևան	5-12-12
3	15166	Մերձավան	9-7-28
4	93353	Աշտարակի խճ.	9-10-35
5	25149	Երևան	9-12-8
6	19450	Երևան	7-12-169
7	43755	Մերձավան	9-12-38
8	14172	Երևան	9-13-31
9	90999	Երևան	04-0079-22
10	26338	Երևան	01-0047-1
11	80088	Երևան	01-0047-19
12	79512	Պռոշյան	9-10-76
13	61482	Երևան	04-0054-1
14	42285	Երևան	7-7-28
15	24236	Երևան	7-13-57
16	38451	Նուբարաշենի խճ.	1-7-3
17	24923	Նուբարաշեն խճ.	1-12-20
18	54574	Նուբարաշեն	1-12-67
19	57454	Երևան	1-12-80
20	14203	Երևան	1-15-16
21	32822	Երևան	3-7-20
22	50552	Երևան	3-12-38
23	59559	Երևան	3-12-48
24	74352	Երևան	3-15-8
25	98360	Երևան	1-10-1
26	75674	Երևան	03-0080-45
27	95532	Երևան	2-12-35
28	29632	Երևան	07-0028-29
29	88865	Երևան	4-15-6
30	31549	Երևան	7-12-25
31	55076	Բալահովիտ	7-12-61
32	83580	Բալահովիտ	7-12-63
33	55261	Լուսակերտ	8-12-68
34	95414	Երևան	09-0028-88
35	45077	Եղվարդ	50335514
36	56265	Նոր-Արտամետ	50335515
37	80088	Աշտարակի խճ.	8-12-19
38	51054	Երևան	7-12-2083
39	51054	Պռոշյան	9-12-37
40	55537	Երևան	06-0080-411
41	53344	Երևան	6-14-16
42	68617	Երևան	06-12-67
43	28920	Երևան	06-0582-0-1
44	«Մայր Հայաստան»	Երևան	7-3-1
45	ՀՀ ԶԿ	Երևան	7-12-27
46	Զ/Կ Արաբկիր	Երևան	7-12-65

47	Զ/Կ Էրեբունի	Երևան	1-12-22
48	Զ/Կ Նոր-Նորք	Երևան	7-12-8
49	Զ/Կ Շահումյան	Երևան	04-0052-37
50	Զ/Կ Շենգավիթ	Երևան	3-12-17
51	Զ/Կ Մաշտոց	Երևան	66-6004-19
52	Զ/Կ Նարիր	Եղվարդ	50336489

ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐ
«Երևան Ջուր» ՓԲԸ

Գլխ. Տնօրեն

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

Հավելված № 4
<<____>> _____20 թ. կնքված
N _____ ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ *և*

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի № եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 4.1
<<____>> _____20 թ. կնքված
N _____ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ №

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 201 թ. ------ -ին կնքված № ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 201 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն